ՖԵՅՍԲՈՒՔԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էլեկտրոնային տեղեկագիր N3, 2013

Ֆեյսբուք սոցիալական ցանցում 2013 թ.
ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման
այս ուսումնասիրությունն իրականացվում է
«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի
ծրագրով եւ Բաց հասարակության
հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության
ֆինանսական աջակցությամբ:

Դիտարկման գաղափարը,
մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝
Ռեգիոն կենտրոնի տնօրեն՝ ***Լաուրա Բաղդասարյանի***

Դիտարկման խումբը՝ ***Սոնա Քյուրքչյան, Անժելա Չոբանյան,***
Սոսի Խանիկյան, Լենա Նազարյան, Վահե Սարուխանյան

Դիտարկման արդյունքների տեխնիկական մշակումը,
հաշվարկը,աղյուսակներն ու գրաֆիկները ***Շողիկ Ստեփանյանի***

Սույն էլեկտրոնային տեղեկագրում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Ռեգիոն հետազոտական կենտրոնն է, որի բովանդակության համար միայն այդ կազմակերպությունն է պատասխանատու: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները:

Սույն էլեկտրոնային տեղեկագրի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին:

Սույն էլեկտրոնային տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ ԶԼՄ-ների աջակցման ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N18166:

Ռեգիոն հետազոտական
կենտրոնն ինտերնետում
www.regioncenter.info
www.publicdialogues.info
http://facebook.com/RegionCenter

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հետընտրական Ֆեյսբուքում

«Ֆեյսբուքը նախընտրական հարթակ Հայաստանում. նախագահական ընտրություններ» ուսումնասիրության հետընտրական փուլի արդյունքներ

(2013 թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Փետրվարի 19-ից արդեն պարզ էր, որ նախօրեին կայացած նախագահական ընտրությունների թեման դեռ շարունակելու է լինել գլխավորը քաղաքական եւ հանրային օրակարգում:

Հենց այդ օրվանից էլ մենք ձեռնամուխ եղանք Ֆեյսբուքում հետընտրական գործընթացների լուսաբանման, կազմակերպման եւ ուղղորդման ձեւերի, իրադարձությունների հիմնական գործող անձանց եւ ուժերի ակտիվությունների, հանրությանը մատուցվող պնդումների եւ հանրության մեջ դրանց տարաբնույթ ընկալումների ուսումնասիրությանը:

Սա «Ֆեյսբուքը նախընտրական հարթակ Հայաստանում. նախագահական ընտրություններ» մեր ուսումնասիրության վերջին փուլն էր (փետրվարի 19-ապրիլի 9):

Ապրիլի 9-ը որպես հետընտրական փուլի վերջին օր Ֆեյսբուքում, իհարկե, պետք է խիստ պայմանական ընդունել, եթե նկատի ունենանք դրանից հետո էլ տեղի ունեցող իրադարձությունների թափը:

Այդ թափը ինքնին չէր նաեւ այն պատճառով, որ ապրիլի 7-ից պաշտոնապես մեկնարկեց Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը:

Ընտրություններին որոշեցին մասնակցել նախագահական մրցապայքարից ետ քաշված ուժերը՝ ԲՀԿ-ն, ապրիլին կուսակցություն դարձած ՀԱԿ-ը (ՀԱԿԿ), ՀՅԴ-ն:

Ռեւանշի պահանջի տպավորություն է թողնում ոչ միայն նրանց, այլեւ հետընտրական պայքարի առաջամարտիկ Ժառանգություն կուսակցության դիսկուրսը:

Եվ քանի որ, նախագահական հետընտրական գործընթացներն ապրիլի 7-ից սահուն անցում կատարեցին դեպի Երեւանի ավագանու նախընտրական գործընթաց, մենք հարկ համարեցինք ապրիլի 9-ը «նշանակել» որպես մեր ուսումնասիրության ավարտ:

- **Ի՞նչ էր կատարվում հետընտրական ֆեյսբուքում քվեարկության օրվանից հետո:**
- **Ի՞նչ վարք, մասնակցություն եւ գնահատականներ են տվել նախագահի թեկնածուները հետընտրական զարգացումներին, ընտրությունների արդյունքներին:**
- **Ի՞նչ վերաբերմունք եւ մասնակցություն է ունեցել ֆեյսբուքյան քաղաքական եւ քաղաքացիական հանրությունը հետընտրական գործընթացների ձեւավորման մեջ:**
- **ԲաREVOLUTION-ից դեպի ավագանու ընտրություններ:**

Այս հարցերի պատասխաններն էինք փորձում պարզել քվեարկության օրվան հաջորդած 50 օրերի ընթացքում:

Եվ այդ նպատակով մենք՝

- **շարունակեցինք ուսումնասիրել ֆեյսբուքում ներկայացված նախագահի թեկնածուների եւ ընտրությունների ժամանակ գործի դրված էջերը.**

  Հրանտ Բագրատյան - http://www.facebook.com/hrant.bagratyan?fref=ts,

  Ռաֆֆի Հովհաննիսյան - http://www.facebook.com/Raffi.K.Hovannisian,

  Պարույր Հայրիկյան - http://www.facebook.com/hayrikyanparuyr,

  Անդրիաս Ղուկասյան – http://www.facebook.com/andrias.2013?ref=ts&fref=ts,

  Արման Մելիքյան – http://www.facebook.com/arman.melikyan.33?ref=ts&fref=ts,

  Արամ Հարությունյան - http://www.facebook.com/profile.php?id=100005022541378,,

  Վարդան Սեդրակյան - http://www.facebook.com/SedrakyanVardan?fref=ts,

  Վարդան Սեդրակյան խումբ http://www.facebook.com/groups/308742132551382/?ref=ts&fref=ts,

  Արման Մելիքյան խումբ -https://www.facebook.com/groups/395336770548625/?fref=ts,

- **Վերսկսեցինք մի շարք քաղաքական գործիչների եւ ֆեյսբուքյան ակտիվ օգտատերերի էջերի ուսումնասիրությունը:**

  Այս փուլում քաղաքական գործիչների ընտրության համար հիմք էինք ընդունել հետընտրական գործընթացներում այս կամ այն կերպ նրանց ներգրավվածության աստիճանը:

- **Հետեւեցինք ֆեյսբուքում հետընտրական փուլում բացված եւ հենց այդ զարգացումներով պայմանավորված խմբերի էջերին:**

Հետընտրական իրավիճակ եւ քաղաքական գործընթաց

«Ի՞նչ է լինելու հարցն» այդ թվում եւ Ֆեյսբուքյան տարածքներում հնչեցվեց քվեարկության հաջորդ իսկ օրվանից:

Այն չէր կորցնում իր սրությունը հետընտրական գրեթե երկու ամիսների ընթացքում, պայմանավորված էր մեծ մասամբ պաշտոնապես արդեն Ս.Սարգսյանի գլխավոր մրցակիցը դարձած Ր.Հովհաննիսյանի գործողություններով:

Չնայած դրանց նկատմամբ դրսեւորած վերաբերմունքը, մասնակցության չափը, դրանց գնահատականները ծայրահեղ տարաբնույթ էին, սակայն կար մեկ ընդհանուր ընկալում. այն, ինչ կատարվում է, նման չէ Հայաստանում անցած հետընտրական եւ ոչ մի գործընթացի: Այն, ինչ կատարվում է, կանխատեսելի չէ, ինչպես կանխատեսելի չէ ինքը Ր.Հովհաննիսյանը:

Ր.Հովհաննիսյանի բողոքի հանրահավաքները Երեւանում (սկսած փետրվարի 19-ից), Հայաստանի բոլոր մարզերում (փետրվարի 23- մարտի 9), երկու ժամ տեւած հանդիպումը Ս.Սարգսյանի հետ նրա նստավայրում (փետրվարի 21), ՍԴ –ին ընտրությունների արդյունքների պաշտոնական բողոքարկումը (մարտի 4), Ր. Հովհաննիսյանի հացադուլը Ազատության հրապարակում (մարտի 10-31), նրան սատարող ուժերի, կազմակերպությունների քաղաքացիական անհնազանդության ակցիաներն այդ ընթացքում, եւ ապրիլի 9-ի իրադարձությունները. ՀՀ նախագահի երդման արարողությանը զուգահեռ նույն ժամին Ազատության հրապարակում Ր.Հովհաննիսյանի երդումը, տարբեր վայրերից ժամանած մարդկանց երթը եւ երեկոյան ոստիկանության եւ ցուցարարների ֆրագմենտար բախումները:

Ահա առանցքային իրադարձությունների խիստ համառոտ նկարագրությունը, որոնք, չնայած քաղաքական հայտնի գործիչների, վերլուծաբանների կողմից գնահատվեցին որպես ոչ քաղաքական գործընթացներ, սակայն չափազանց լարված էին պահում իրավիճակը ուսումնասիրման ընթացքում, նաեւ դառնում ֆեյսբուքյան տարբեր քննարկումների ու բանավեճերի, հումորի ու սարկազմի, քարոզչության եւ հակաքարոզչության բուն պատճառը:

«Ձեր իրավունքների համար ես միայնակ չեմ կարող պայքարել, միացեք»: Ր.Հովհաննիսյանի նկարով այս էլեկտրոնային թռուցիկը, որ սկսեց ակտիվորեն տարածվել Ֆեյսբուքով հանրահավաքների առաջին իսկ ալիքի ժամանակ, հիմնականում ուղղված էր սովորական քաղաքացիներին, այլ ոչ թե քաղաքական ուժերին:

Չնայած քաղաքական տարբեր ուժերին հասցեագրված նրա մի քանի թափանցիկ ուղերձներին, որոնց մեջ կար եւ պայքարին միանալու կոչ, եւ դրա հիմնավորում («սա միայն Ժառանգության պայքարն ու հաղթանակը չէ», «պետք է կանգնել ժողովրդի կողքին» եւ այլն) ըստ էության շարժումը մնաց որպես Ռաֆֆու շարժում: Ժառանգությանը չմիացավ ոչ մի այլ նոմինալ քաղաքական ուժ:

Թե ինչու, օրինակ, «փողոցային պայքարի» փորձ ունեցող ՀԱԿ-ը չմիացավ Ժառանգությանը, Ֆեյսբուքում գտնվեցին մի շարք հիմնավորումներ: Ահա մեկը. «...Վերջապես, կրկին հիշելով Ռաֆֆի Հովհաննիսյանի անկանխատեսելիության գործոնը, պետք է փաստել, որ ոչ միայն Տեր-Պետրոսյանի, այլեւ ցանկացած գործչի հայտնվելը Հրապարակում որոշակի ռիսկեր է պարունակում, քանի որ եթե, օրինակի համար, վաղը Ռաֆֆին գնա հասարակության համար ոչ ընկալելի փոխզիջման իշխանության հետ (խոսքը ոչ թե ցանկացած, այլ հենց հասարակության տեսակետից անընդունելի փոխզիջման մասին է), ապա հարթակում նրա կողքին կանգնածները կարող են հայտնվել բավականին անհասկանալի կարգավիճակում... Բացի այդ, մեծ հարց է առաջանում, թե որքա՞ն ժողովուրդ կմնա Հրապարակում Ռաֆֆու հնարավոր այդ քայլից հետո: Ի դեպ, եթե ուշադիր եք եղել, ԱԺ արտահերթ ընտրությունների տարբերակը ժխտել է Սերժ Սարգսյանը, բայց չի ժխտել Ռաֆֆու թիմը. արդյո՞ք դա ընդունելի տարբերակ կլինի Հրապարակի համար» (Հրանտ Տեր-Աբրահամյան, 25. 02):

Տարբեր փուլերում այս կամ այն կուսակցությունների, շարժումների ներկայացուցիչների հայտարարությունները հիմնականում նշանավորում էին բողոքի հանրահավաքների գնացող ժողովրդին, այլ ոչ թե Ռ.Հովհաննիսյանին որպես ընդդիմադիր քաղաքական առաջնորդին միանալու քայլ: Դա հատկապես արտահայտվեց ՀԱԿ մի շարք ակտիվ համակիրների ապրիլի 9-ի փողոցային երթերին մասնակցությամբ, չնայած ՀԱԿ առաջնորդ Լ.Տեր-Պետրոսյանի հայտարարությանը, որ ընտրություններում հաղթել է Ռ.Հովհաննիսյանը, իսկ նրան իր միանալ-չմիանալու հարցը կախված կլինի հարթակում գործ եւ ծրագիր լինելուց (23.02):

ԲՀԿ առաջնորդ Գ.Ծառուկյանը հայտարարեց, թե իրենք՝ ԲՀԿ-ն, ժողովրդի կողքին են, բայց դա գործնական քայլերի չհասավ:

ՀՅԴ մի քանի ղեկավարներ մասնակցեցին Ազատության հրապարակում կազմակերպված բողոքի հանրահավաքներին: Բայց ոչ ապրիլի 9-ի իրադարձություններին:

Թեկնածուներն ընտրություններից հետո

Բացի նախագահի թեկնածու Ա.Ղուկասյանից, որը ողջ նախընտրական փուլի ընթացքում հացադուլ էր իրականացնում, Ր.Հովհաննիսյանին չմիացան նաեւ մյուս թեկնածուները:

Նրանցից յուրաքանչյուրը Ֆեյսբուքյան իր էջում զբաղված էր իր «հետընտրական» գործերով.
Պ.Հայրիկյանը պարբերաբար հանդես էր գալիս իր առողջական վիճակի հետ կապված նկարագրություններով: Կարծիք հայտնեց իր մահափորձի հետ առնչություն ունենալու մեղադրանքով նախկին նախագահի թեկնածու Վ.Մեդրակյանի ազատազրկման առիթով (որ նա միջնորդ է, այլ ոչ պատվիրատու): Նեղացավ, երբ Ֆեյսբուքում քննադատական վերաբերմունք արտահայտվեց այն առումով, որ պետությունը նրան գումար է տրամադրել արտասահմանում առողջական վիճակը շտկելու համար:

Ա.Մելիքյանը հետընտրական առաջին օրերին Ֆեյսբուքյան հանրությանը տեղեկացնում էր Հայաստանում տարբեր երկրների դեսպանների հետ անձամբ հանդիպելու իր հաջողված եւ չստացված փորձերի մասին, շարունակում էր բացահայտել ընտրակեղծիքների ողջ մեխանիզմը, որը հիմնականում նրա տեսանկյունից կառուցված էր արտասահմանում ապրող եւ ՀՀ քաղաքացիների մեկ միլիոնից ավելի ցուցակների շնորհիվ:

Ի տարբերություն ՍԴ չդիմած մյուս թեկնածուների՝ Արման Մելիքյանը, Ֆեյսբուքում բացատրեց, թե ինչու ինքն էլ չի դիմել ՍԴ. «Այսօր մեր երկրում չկա անկախ, անաչառ եւ անկաշառ դատարան, իսկ հայցադիմում ներկայացնելով ես, փաստորեն, կճանաչեի այդ դատարանի դատելու իրավունքը եւ կանխավ պիտի համակերպվեի դրա ցանկացած վճռի հետ: Այդ ճանապարհով գնացին Ռաֆֆի Հովհաննիսյանն ու Անդրիաս Ղուկասյանը՝ ստացան այն վճիռը, որը նույնքան կանխատեսելի էր, որքան որ կանխատեսելի էր ընտրությունների կեղծումը»:

Հացադուլը նա համարեց հուսահատության եւ ոչ թե քաղաքական պայքարի դրսեւորում, ուստի չգնաց նաեւ Ազատության հրապարակ, ինչպես արեցին մի քանի պետական գործիչներ, նախագահի թեկնածուներ, քաղաքական այլ կուսակցությունների անդամներ որպես Ր.Հովհաննիսյանին զուտ մարդկային աջակցություն ցուցաբերելու ակցիա:

Վարդան Սեդրակյանը նախքան իր կալանավորումը (մարտի 5) հանդես էր գալիս հիմնականում Ռ.Հովհաննիսյանի եւ Հ.Բագրատյանի դեմ ելույթներով: Նրա վերջին ստատուսը կոչն էր Ֆեյսբուքի օգտատերերին նամակ գրել Հրանտ Բագրատյանին եւ հարցնել, թե ե՞րբ է կազմակերպելու մամուլի ասուլիս եւ տալու ընտրությունների արդյունքների քաղաքական գնահատականը (04.03): Իմիջիայլոց, իր այս ստատուսը նա տեղադրեց նաեւ Հ.Բագրատյանի էջում, որը հետագայում հանվեց վերջինիս էջից: Կալանավորվելուց հետո (սկսած մարտի 5-ից) Վ. Սեդրակյանի էջում հայտնվում էին միայն նախաքննության ընթացքի մասին պատմող հաղորդագրություններ, հատվածներ Սասունցի Դավիթ էպոսից եւ Վ.Սեդրակյանի նախկինում գրած պատմվածքները:

Հետընտրական փուլում իր ֆեյսբուքյան ակտիվությունները քչացրեց Հ.Բագրատյանը: Առաջին օրերին նա հանդես եկավ իշխանություններին ուղղված կոչով անհապաղ իրականացնել բարեփոխումներ, գնալ հրապարակ եւ կանգնել ժողովրդի կողքին, բավարարել Ռաֆֆի Հովհաննիսյանի պահանջները: Իսկ այդ բավարարման ձեւը գտնել բանակցությունների միջոցով (Կոչ իշխանություններին, 24.02):

Բայց Ռաֆֆի Հովհաննիսյանի հետագա գործողությունները (հացադուլ, հանրահավաքները դրանից հետո էլ շարունակելը) Հ.Բագրատյանը համարեց պոպուլիզմ, ինչը շարունակելու դեպքում, ըստ նրա՝ Ռ.Հովհաննիսյանը շատ արագ կկորցնի ձեռքբերածը՝ 540 հազար ընտրողների վստահությունը («Պոպուլիստների կյանքը կարճ է. Ռաֆֆի Հովհաննիսյանը շատ արագ կարող է կորցնել այս ամենը», 02.04):

Հետընտրական առաջին շրջանում Հ.Բագրատյանի էջում հայտնված նյութերի մեծ մասը տեղադրվել էին այլ օգտատերերի կողմից, որոնց մեջ գերակշռում էին Ռ.Հովհաննիսյանին միանալու կոչերը: Ինչպես օրինակ՝ «Պարոն Բագրատյան, չե՞ք ուզում 101-րդ քայլը կատարել եւ կանգնել Ռաֆֆու կողքին» (23.02):

Նշենք, որ հետընտրական առաջին ժամանակահատվածում (Փետրվարի19-մարտի 10) Հ.Բագրատյանի էջում հայտնված 33 նյութերից միայն 4 են եղել Հ. Բագրատյանի կողմից տեղադրվածները, մյուսները՝ այլ օգտատերերի կողմից մոտավորապես վերը բերված բովանդակության կոչեր են եղել: Հետագայում Հ.Բագրատյանը շարունակեց ֆեյսբուքում գրել մինչեւ նախագահական ընտրություններն ունեցած ինտենսիվությամբ:

Ընտրությունների համար բացված Վարդան Սեդրակյան եւ Արման Մելիքյան խմբերի էջերը բովանդակային առումով ոչնչով չէին տարբերվում նրանց իսկ թեկնածուական էջերից: Ի տարբերություն Ֆեյսբուքում գործող այլ խմբերի, որտեղ շրջանառվում են սովորաբար խմբերի տարբեր անդամների կողմից մեջտեղ բերված սեփական եւ այլ աղբյուրների նյութերը, շուրջ 1700 անդամ ունեցող Վարդան Սեդրակյան եւ շուրջ 450

անդամով Արման Մելիքյան խմբերում նյութերը տեղադրում էին բացառապես Վ.Սեդրակյանի եւ Ա. Մելիքյանի թեկնածուական էջերի ադմինները:

Բոլոր թեկնածուների համեմատ իր բազնաբնույթ ակտիվություններով՝ էջը հավանողների քանակով, տեղադրված նյութերի քանակով, դրանց բովանդակության եւ Ֆեյսբուքում տարբեր ակցիաներ կազմակերպելու առումով առանձնանում էր Ր. Հովհաննիսյանի էջը:

Հետընտրական գործընթացների ինտերակտիվությունը

Մենք շարունակում էինք ուսումնասիրել այն հարցը, թե իրականում ինչ կապ կա թեկնածուների ֆեյսբուքյան ֆաների (նրանց էջը հավանած օգտատերերի) քանակի եւ նրանց համակրողների, կողմնակիցների իրական քանակի միջեւ: Հատկապես ո՞ր թեկնածուների էջերի բովանդակություններն են արժանանում օգտատերերի հավանությանը, դառնում համեմատաբար ավելի լայն քննարկումների առարկա:

Կարճ ասած, ի՞նչ ինտերակտիվ արձագանքների են արժանանում այս կամ այն քաղաքական գործիչների ուղերձները, եւ արդյո՞ք նրանց նկատմամբ ֆեյսբուքյան ինտերակտիվությունը համահունչ է հանրային իրական վերաբերմունքին:

Հետընտրական առաջին շրջանում մենք արձանագրեցինք Ռաֆֆի Հովհաննիսյանի էջի ֆաների քանակի անընդհատ եւ թռիչքային աճ: Քվեարկության նախօրեին (16.02) շուրջ 15.000 ֆան-լսարանը մի քանի օրվա ընթացքում աճեց շուրջ 9.000-ով (փետրվարի 19 –ին արձանագրվեցին 24.000-ից ավելի էջը հավանողներ):

Հետընտրական մնացած օրերի ընթացքում Ր.Հովհաննիսյանի լսարանն անընդհատ աճում էր, սակայն ավելի համաչափ տեմպերով:

Այդպես էր եւ Ր. Հովհաննիսյանի հացադուլի օրերին, երբ զանգվածային բնույթ էին կրում Ազատության հրապարակում նրան զորակցություն հայտնելու փաստերը, եւ ապրիլի 9-ի նախօրեին, նաեւ՝ հաջորդ մեկ-երկու օրերի ընթացքում:

Ռաֆֆի Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջի (http://www.facebook.com/Raffi.K.Hovannisian)

ցուցանիշները նախքան նրա՝ հացադուլի մասին հայտարարությունը (19.02-10.03.13) եւ դրանից հետո (11.03-09.04.13)

Թեկնածու	Ամիս/ամսաթիվ	Էջը հավանողների քանակ (Like)	
Ռաֆֆի Հովհաննիսյան	19.02-10.03.13	24123	27689
	11.03-09.04.13	28347	32103

Թեկնածու	Ամիս/ ամսաթիվ	Նյութերի քանակ	Այդ թվում՝ օգտատերերի կողմից քննարկված նյութերի քանակ	%	Նյութերի միջին օրական քանակ
Ռաֆֆի Հովհաննիսյան	19.02 - 10.03.13	217	193	89%	11
	11.03 - 09.04.13	440	421	96%	15

Նույն տրամաբանությամբ մենք հետեւում էինք նաեւ մարտի 5-ին ազատազրկված թեկնածու Վարդան Սեդրակյանի էջի ինտերակտիվությանը: Ենթադրելով, որ նրա էջի շուրջ 5000 ֆաները ինչ-որ կերպ պետք է արձագանքեին նրա հետ կատարվածին: Սակայն, ցուցանիշներով ոչ մի էական տատանում լսարանի ոչ մեծացման, ոչ էլ հակառակը՝ նվազման, ուղղությամբ տեղի չունեցավ:

Վարդան Սեդրակյանի ֆեյսբուքյան էջերի (http://www.facebook.com/SedrakyanVardan?fref=ts) ցուցանիշները.
ազատազրկումից առաջ (19.02- 05.03.13) եւ հետո (06.03 - 09.04.13)

Ինտերակտիվություն

Թեկնածու	Ամիս/ամսաթիվ	Էջը հավանողների քանակ (Like)	
Վարդան Սեդրակյան	19.02.13-05.03.13	5273	5184
	06.03.13-09.04.13	5184	5106

Թեկնածու	Ամիս/ամսաթիվ	Նյութերի քանակ	Այդ թվում՝ օգտատերերի կողմից քննարկված նյութերի քանակ	%	Նյութերի միջին օրական քանակ
Վարդան Սեդրակյան	19.02-05.03.13	16	14	88 %	1.1
	06.03-09.04.13	22	11	50 %	0.6

Մնացած թեկնածուների էջերում ինտեարկտիվության աստիճանը նույնպես փոփոխություններ չի կրել:

Փոխարենը բավական բարձր էր Ռաֆֆի Հովհաննիսյանի էջի կոնտենտների այս կամ այն կերպ (Like, Share, Comment) արձագանքների քանակը (talking about): Մարտի 5-ին եւ հաջորդ մեկ -երկու օրերի ընթացքում այս ցուցանիշը նույնիսկ գերազանցեց նրա թեկնածուական էջի ֆաների ընդհանուր թվին (27.102 likes, 27.325 talking about):

Էջի որոշ նյութեր արժանանում էին միջինը շուրջ 500 like-երի:

Բայց, օրինակ՝ Ռ.Հովհաննիսյանի Սարդարապատ միության հիմնադիր անդամ Ժ.Սեֆիլյանի հետ լուսանկարը ստացավ 1062 Like եւ 185 Share, ինչը քաղաքական

կոնտենտների դեպքում հազվադեպ հանդիպող ցուցանիշ է ֆեյսբուքի հայաստանյան հատվածի համար:

Հետընտրական շրջանում բոլոր մնացած թեկնածուների էջերի նյութերը քննարկողների, տարածողների եւ հավանողների քանակը նվազեց (տես՝ Հավելված, Աղյուսակներ 1 -5, Գրաֆիկ 1, 2, 3):

Հետընտրական թեմաները

Այս ընթացքում էր, որ ֆեյսբուքյան հետընտրական դիսկուրսում կայուն սկսեցին քննարկվել այնպիսի թեմաներ, որոնք կամ դիտարկվում էին նորովի, կամ՝ առաջին անգամ նման բարձր ինտենսիվությամբ. քաղաքացիական անհնազանդություն, իշխանափոխություն հեղափոխության միջոցով, եկեղեցին քաղաքական գործընթացներում, հացադուլը որպես քաղաքական պայքարի միջոց, երկխոսություն եւ քաղաքական առեւտուր, ընդդիմության պայքարի գրավականը, մեդիայի կողմից ավելի քողարկված քարոզչական ուղղորդում եւ այլն:

Հետընտրական շրջանում մեր դիտարկած օգտատերերի՝ նախագահի թեկնածուների, քաղաքական գործիչների ու ֆեյսբուքյան ակտիվիստների կողմից բարձրացվեցին մի շարք՝ իրադարձություններին համահունչ խնդիրներ.

Հրաժարական – իշխող կուսակցության եւ մարզային ղեկավարության, ինչն ավելի շատ անդրադարձներ ունեցավ ֆեյսբուքյան հանրության, քան թե թեկնածուների էջերում:

Հետընտրական իրավիճակի ընդհանուր նկարագրություններ ավելի շատ արեցին թեկնածուները, քան թե ակտիվիստները:

Չնայած, որ Ր.Հովհաննիսյանի հացադուլն, ի տարբերություն նախորդ այս կարգի ակցիաների, բոլորի ուշադրության կենտրոնում էր, սակայն դրան ավելի շատ անդրադարձներ եղան հենց Ր.Հովհաննիսյանի էջում: Ամեն օր հացադուլի վայրից էջում տեղադրվում էին ֆոտո ռեպորտաժներ եւ այլ նյութեր:

Մոտավորապես նույն քանակի արձագանքներ եղան թեկնածուների եւ ֆեյսբուքյան հանրության էջերում եկեղեցու դերի, հետընտրական շրջանում երկխոսության եւ քաղաքական կոմպրոմիսի, այսպես կոչված հանրային ալտերնատիվ կառույցներ ստեղծելու եւ դրանց միջոցով քաղաքացիական անհնազանդություն ցուցաբերելու խնդիրներին:

Ի՞նչ է լինելու երդման զուգահեռ արարողությունների հետ եւ դրանցից հետո: Այս խնդիրը նույնպես ունեցավ մոտավորապես նույն քանակի անդրադարձներ թեկնածուների եւ ֆեյսբուքյան ակտիվիստների էջերում (տես՝ Հավելված, Աղյուսակներ 6 - 15, Գրաֆիկ 4, 5):

ԲաRevolution-ը Ֆեյսբուքում

Փետրվարի 19-ին ԵԱՀԿ դիտորդական առաքելության ընտրությունների ընթացքի մասին նախնական զեկույցի հրապարակման ժամանակ մի խումբ ակտիվիստներ ընդհատեցին միջազգային դիտորդների ելույթը եւ ընթերցեցին սեփական կարծիքը ընտրությունների օրը տեղի ունեցած իրադարձությունների եւ արդյունքների կեղծ լինելու մասին: Այս մասին պատմող տեսանյութը ակտիվիստները միանգամից շրջանառության մեջ դրեցին Ֆեյսբուքում, որը դարձավ այս աննախադեպ իրադարձության մասին տեղեկատվության սկզբնաղբյուրը, իսկ որպես երեւույթ՝ Հայաստանի ընտրական գործընթացների պատմության մեջ էքսկլյուզիվ իրադարձություն:

Համենայնդեպս, բոլոր նախորդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելությունների գնահատականներից ու եզրակացություններից դժգոհելու, դրանց նկատմամբ անվստահություն արտահայելու դեպքերը տեղի էին ունենում այսպես կոչված հեռակա կարգով, ոչ դիտորդներին դեմ հանդիման:
Ակցիայից հետո ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ֆեյսբուքյան էջում (https://www. facebook.com/osce.odihr) ակտիվիստները սկսեցին նախագահական ընտրություններում խախտումների մասին պատմող նյութերի հղումներ տեղադրել, որոնք հետագայում ջնջվեցին կազմակերպության էջը վարողների կողմից:

Սա Ֆեյսբուքում ընտրությունների արդյունքները մերժելու առաջին ակցիայի մասին պատմությունն է: Հետագա օրերին բոլոր այս կարգի գործողությունները ստացան «բարեւական ակցիա» անվանումը: Ֆեյսբուքի միջոցով ներկայացվում կամ կազմակերպվում էին Ազատության հրապարակում եւ այլուր ընթացող/ ընթանալիք բողոքի ակցիաները (նաեւ՝ livestream ռեժիմով):

Ինչպսին էր, օրինակ, Ռաֆֆի Հովհաննիսյանի ընտրություններում հաղթելու կապակցությամբ նույն օրն ու նույն ժամին (մարտի 4-ին ժ.23.55-ին) շնորհավորական գրություններ Ֆեյսբուքով տարածելու նախաձեռնությունը:

Նախաձեռնության հեղինակի առաջարկով՝պետք էր գրել « ով ինչպես կարող է եւ ուզում է, միայն թե սկզբից պարտադիր գրում ենք ԲԱՐԵՎ բառը... Ինչն ավելի ցույց կտա մեր

միասնականությունը: Կարեւորը , որ միահամուռ կերպով լինի այդ ամենը: Ֆեյսբուքը հեղեղելու ենք հաղթանակի ստատուսներով: Բավական տպավորիչ կլինեն հայկական ֆեյսում նույն ժամին իրար հետևից շարվող մեր շնորհավորանքները» (https://www.facebook.com/satine.andreasyan/posts/497330253664407):

Ակցիան տեղի ունեցավ, նշված ժամին տարբեր օգտատերեր տարբեր բովանդակության շնորհավորանքներ էին հղում միմյանց Ր.Հովհաննիսյանին ընտրություններում հաղթելու կապակցությամբ: Եվ բոլոր ստատուսներն սկսվում էին «Բարեւ» բառով:

Ֆեյսբուքում բացվեցին հատուկ էջեր կամ արվեցին այլ ինտերնետ ռեսուրսներին հղումներ, որոնք ներկայացնում էին տարբեր ակցիաներ. ուսանողական դասադուլ (Դասադուլ-Բարեւ Նոր Հայաստան - http://www.facebook.com/pages/%D4%B4%D5%A1%D5%BD%D5%A1%D5%A4%D5%B8%D6%82%D5%AC-%D4%B2%D5%A1%D6%80%D5%A5%D6%82-%D5%86%D5%B8%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/213439865464581?fref=ts), կողմնակիցների ստորագրահավաք (http://www.change.org/petitions/the-armenian-people-recognize-raffi-hovannisian-as-the-truly-elected-president-of-the-republic-of-armenia, Բաց քաղաքացիական խորհրդի նիստեր Ազատության հրապարակում եւ այլն:

Բոլոր այս նախաձեռնությունների մասին պատմող նյութերն էքսկլյուզիվ կոնտենտներ էին, որոնց միջոցով ներկայացվում էր մարտի 10-31 -ի հացադուլի ընթացքում Ազատության հրապարակում կատարվող ամեն մի շարժ՝ Ր. Հովհաննիսյանի հանդիպումներն իրեն տեսակցության եկած քաղաքացիների, գործիչների, երգիչների, դերասանների հետ, այդ ընթացքում վերջիններիս կազմակերպած ելույթներն ու համերգները եւ այլն:

Հետընտրական մեմեր, քաղաքական սարկազմ/ հումոր, սեւ PR

BaRevolution-ը այլ կերպ կոչում էին Բարեւի հեղափոխություն:

Այս տերմինը սկսեց շրջանառվել Ֆեյսբուքում ընտրություններից անմիջապես հետո, նշանավորում էր Ռ.Հովհաննիսյանի գլխավորած շարժումը եւ միանգամից մեկնաբանվում էր մի քանի տեսանկյուններից.

- որպես պայքարի ձեւ՝ Բարի, անարյուն հեղափոխություն,
- որպես նպատակ՝ բարու հաստատում եւ պայքար չարի դեմ,
- որպես Ռ.Հովհաննիսյանի քարոզչական տեխնոլոգիայի՝ բոլոր հանդիպումների ժամանակ մարդկանց հատ-հատ բարեւ տալու եւ նրանց հետ ողջագուրվելու, տրամաբանական շարունակություն:

Հիշեցնենք, որ քարոզչության փուլում դա կամ մեկնաբանվում էր որպես պոպուլիստական եւ Հովհաննիսյանին ոչինչ չխոստացող հնարք, կամ՝ դառնում էր Ֆեյսբուքում քաղաքական հումորի ու սարկազմի առիթ:

Բարեւը դարձավ հետընտրական փուլի գլխավոր մեմը:
Բարեւ-ով առաջ եկան մի քանի բառակազմություններ, որոնք Ֆեյսբուքում ունեին իրենց նշանակությունները.
Բարեւագրություն նշանակում էր Ռ.Հովհաննիսյանի կողմնակիցների կողմից Ֆեյսբուքում տեղադրված (գրված) ցանկացած ելույթ, հայտարարություն:
Բարեւական էջ ասելով նկատի ունեին Ռ. Հովհաննիսյանի կողմնակցի էջ:

Այս եւ առհասարակ Ֆեյսբուքում ընտրությունների ընթացքում տարածված մեմերի առիթով ՀՀԿ փոխնախագահ Ա.Աշոտյանն իր էջում գրեց. «Լեզվի պետական տեսչությունը հայտնում է, որ «բարգավաճ, բարեւ, կոնգրես, ապահով, հանրապետական, էպոս, Ռաֆֆի» բառերը դեռ չեն կորցրել իրենց իրական, ապաքաղաքական, առաջնաստեղծ իմաստները» (26.02):

Մեր ուսումնասիրության ժամանակահատվածում Ս.Սարգսյանի միակ հանրային ելույթը մարտի 18-ի մամուլի ասուլիսն էր: Նրա մի քանի արտահայտություններ վերածվեցին ֆեյսբուքյան նոր մեմերի՝ «գաղջ մթնոլորտ» (Ս.Սարգսյանը հայտարարեց, որ երկրից արտագաղթի հիմնական պատճառը ոչ թե սոցիալ-տնտեսական ծանր վիճակն է, այլ երկրում տիրող գաղջ մթնոլորտը), «ինչպես տատս էր ասում»:

Այս վերջին արտահայտությունը սկիզբ դրեց ֆեյսբուքյան նոր հակաքարոզչական **«Տատ»** էջին (http://www.facebook.com/pages/%D5%8F%D5%A1%D5%BF/226445050813794) (19.02) եւ եւ դարձավ նոր դեմոտիվատորներ տարածելու առիթ:

Էջը սակայն Ֆեյսբուքում մեծ համբավ չունեցավ, ակտիվորեն գործեց առաջին մի քանի օրերի ընթացքում:

Ապրիլի 9-ի դրությամբ՝ էջն ուներ ընդամենը 406 հավանող, իսկ նրա կոնտենտները տարածող կամ հավանող օգտատերերի քանակը բավական համեստ էր (միջինը՝ նյութերը հավանողների քանակը տատանվում էր 10 հոգու տիրույթում):

Համեմատության համար նշենք, որ հետընտրական ողջ ընթացքում ակտիվ էր ընտրություններից հետո բացված բարեւական «**Անտիսիստեմ»** էջը (http://www.facebook.com/BAREVolutionary?fref=ts), որի ֆաների եւ որի կոնտենտները տարածողների, հավանողների եւ մեկնաբանողների քանակը (talking about) ապրիլի սկզբի դրությամբ մոտավորապես նույնն էին (1,138 էջը հավանող եւ նյութերին 1,290 այս կամ այլ կերպ արձագանքող):

Իր հերթին ֆեյսբուքյան մեմի ստեղծման պատճառ դարձավ Ր.Հովհաննիսյանի «զաղնի չկա» արտահայտությունը:

Հետընտրական ֆեյսբուքում նաեւ պարբերաբար սկսեցին տարածվել էպիստոլյար ժանրի (որոշ դեպքերում լուրջ, բայց ավելի շատ՝ հումորային) գրություններ: Եվ այդ փոխադարձ քաղաքական կոնտեքստով նամակագրությունը սկսվեց հայտնի երգիչ Ս.Թանկյանի Ս.Սարգսյանին հասցեարգրված նամակից, ապա նաեւ Ս.Սարգսյանի նրան ուղղված պատասխանից:

Ր.Հովհաննիսյանի հասցեին քաղաքական հումորի եւ սարկազմի դրսեւորումները կտրուկ նվազեցին նրա հացադուլի շրջանում: Նախքան հացադուլը, եւ հատկապես դրանից հետո նրա գործողությունների նկատմամբ վերաբերմունքը նաեւ այս կարգի հումորով էր դրսեւորվում. «Ուրախ եմ, որ մեր Հայրենիքը Ռուսաստանի պես անծայրածիր չէ: Թե չե Ռաֆֆին մինչև 2018ը կֆրար մարզերով, ու իմ կոլլեգաներից շատերը գերհոգնածությունից վաղաժամկետ կլքեին այս աշխարհը: Շնորհակալ եմ մեր պապերին, որ էս մի բուռ հողն են մեզ թողել», - ֆեյսբուքյան իր էջում գրեց լրագրող Ա.Սուլեյմանյանը (Ֆեյսբուքյան ակտիվիստներ, 26.02):

Ռաֆֆի Հովհաննիսյանի հասցեին Սեւ PR- ը Ֆեյսբուքում ակտիվացավ ապրիլի 9-ին: Ոստիկանության ղեկավար Վ.Գասպարյանի ուղեկցությամբ Ծիծեռնակաբերդում աղոթելու փաստը, ցուցարարների մի մասին Բաղրամյան փողոցում թողնելը քննադատական ալիք բարձրացրեցին նրա հասցեին:

«Ռաֆֆին քաղաքական դիակ դարձավ» արտահայտությունը այդ իսկ օրվանից սկսեցին տարածել իշխանամետ լրատվամիջոցները: Տարբեր ձեւակերպումներով, նույն բանը շատ սկսեցին հայտարարել նաեւ մի շարք վերլուծաբաններ, ընդդիմադիր ուժերի համակիրներ ու անդամներ:

Թեկնածուների էջերում Սեւ PR եւ ինքնագովազդի քանակ



Քաղաքական գործիչների եւ ֆեյսբուքյան ակտիվիստների էջերում Սեւ PR-ի, քաղաքական հումորի եւ քաղաքական սարկազմի քանակ



Հետընտրական շրջանում քաղաքական հումորի, սարկազմի, Սեւ PR-ի մասին քանակական տվյալները տես նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 16:

Նախընտրական deja vu, կամ Երեւանի ավագանու համար պայքարի նախնական ուրվագիծ

Ավագանու ընտրությունները որպես գործընթաց Ֆեյսբուքի հայաստանյան հատվածում առաջին անգամ կարող են դառնալ հանրության կողմից դարձյալ լայն քննարկման եւ այդ գործընթացում հիմնական դերակատարների միջեւ պայքարի պատճառ: Սոցիալական ցանցին բնորոշ բոլոր հատկանիշներով. Ֆաների ցուցանիշների մրցապայքարից մինչեւ քարոզչական եւ հակաքարոզչական կամպանիաների կազմակերպում:

Մեր ուսումնասիրության ժամանակ առաջին անգամ Ավագանու ընտրությունների թեման արծարծվում էր ընտրական գործընթացների այլ թեմաներին զուգահեռ (տես Հավելված, Աղյուսակ 8):

Ֆեյսբուքում ապրիլի 1-ից բացված «Ավելի լավ Երեւան» ՀՀԿ-ական խումբը (http://www.facebook.com/AveliLavYerevan?fref=ts) հրապարակային է պահում իր անդամների քանակը՝ շուրջ 23.000:

Գործում է սրան հակադիր խումբ՝ «Ավելի լավ Երեւան առանց Տարոն Մարգարյանի» շուրջ 1100 անդամով:

Հակաքարոզչական բնույթի է «Ես զզվում եմ Արմեն Աշոտյանից» ոչ կոռեկտ անվանումով եւ քաղաքակիրթ քաղաքական պայքարի սահմաններն անցնող էջը (http://www.facebook.com/EsZzvumEmArmenAsotyanic):

Մարտի երկրորդ կեսից երկարատեւ ֆեյսբուքյան լռությունից դուրս եկավ նաեւ ԲՀԿ անդամ, ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Նա վերսկսեց երկրում ընթացող գործընթացների իր մեկնաբանությունները, կարեւորելով մայիսի 5-ին կայանալիք Երեւանյան ընտրությունների նշանակությունը:

Ֆեյսբուքյան իր էջում այս թեմայով սկսել է ռեգուլյար գրել նաեւ Երեւանի քաղաքապետի ՀՅԴ թեկնածու Արմեն Ռուստամյանը:

Չնայած նախագահական ընտրությունների ժամանակ, ինչպես ինքը գրեց Ֆեյսբուքում, ստացած 4% ձայներին, Երեւանյան ընտրություններին չմասնակցելու համար երեւանցիներից ներողություն խնդրեց Ազատություն կուսակցության նախագահ, ՀՀ նախագահի նախկին թեկնածու Հրանտ Բագրատյանը:

Ակնհայտ են քարոզչական բախումները ընդդիմադիր Ժառանգություն եւ ՀԱԿԿ կուսակցությունների միջեւ: Նույն դիմակայության ականատեսն են դառնում ֆեյսբուքյան օգտատերերը ՀՀԿ եւ ԲՀԿ ներկայացուցիչների փոխհրաձգություններին ծանոթանալիս:

Տպավորություն կա, որ պայքարը ոչ թե ձայների, այլ քաղաքական ռեաբիլիտացիայի համար է: ՀՀԿ-ն եւ Ժառանգությունը ապացուցելու, որ նախագահական ընտրություններում իրենց հաղթանակը իրական էր: ԲՀԿ-ն, ՀԱԿԿ-ը եւ ՀՅԴ-ն՝ որ հանրության համար ընկալելի հիմք ունենան վերադառնալու ակտիվ քաղաքական դաշտ:

Արդեն հիմա պետք է արձանագրենք ապրիլի 7-ից սկսած Ֆեյսբուքյան քաղաքական պայքարի ավելի բազմադեմ լինելու հանգամանքը:

Բայց սա արդեն մեր ուսումնասիրությունից եւ մեր նշանակած ժամկետներից դուրս թեմա է:

ԱՅՍՊԻՍՈՎ՝

- Մենք արձանագրեցինք հետընտրական փուլում գրեթե բոլոր թեկնածուների ֆեյսբուքյան ակտիվության նվազում, բացի Ս.Սարգսյանի գլխավոր մրցակիցը դարձած Ժառանգության առաջնորդ Ռ. Հովհաննիսյանից: Հետընտրական փուլում նրա թիմն էլ ավելի ինտենսիվ սկսեց օգտագործել ֆեյսբուքյան քարոզչական եւ կազմակերպչական հնարավորությունները եւ էլ ավելի շատ կենտենտներ տեղադրել տարբեր էջերում:

- Քաղաքական էլեկտրոնային թռուցիկների տարածումը ցանցում, տարբեր ակցիաների հրավերներն ու մասնակցելու կոչերը, դրանց անցկացումը նաեւ ֆեյսբուքում ստեղծում էին անընդհատ տեղի ունեցող իրադարձությունների տպավորություն եւ զգացողություն:

- Հետընտրական փուլում ֆեյսբուքյան հարթակն օգտագործում էին նաեւ livestream հեռարձակողներ, որոնք այս դեպքում հնարավորություն էին ստանում մեծացնելու իրենց տրաֆիկները ֆեյսբուքյան լսարանի միջոցով: Ապրիլի 9-ի փողոցային երթերին եւ բախումներին հնարավոր էր հետեւել նաեւ ֆեյսբուքի միջոցով:

- Պետք է արձանագրել, որ նման կրիտիկական եւ լարված իրադարձությունների ժամանակ հանրության համար տեղեկատվության կարեւոր աղբյուր է դարձել ֆեյսբուքը՝ այստեղ տարբեր ԶԼՄ-ների, բլոգերների նյութերը միեւնույն (սեփական) տիրույթում ստանալու եւ համեմատելու հնարավորության շնորհիվ:

- Նախագահի թեկնածուների այսպես կոչված ֆեյսբուքյան ֆան-լսարանների քանակից հնարավոր չէր առաջվա նման պատկերացում կազմել նրանց այս կամ այն գործողություններին հավանություն տվող հանրության մեծության մասին: Օրինակ, Ռ. Հովհաննիսյանի հետընտրական ամենաակտիվ փուլում նրա էջին հավանություն տված մարդկանց քանակը 27.000-30.000 տիրույթում էր, ինչը ընտրությունների ժամանակ նրա օգտին քվեարկած 540.000 քաղաքացիների 5% -ից էլ քիչ է:

- Մենք արձանագրեցինք նաեւ ՏԻՄ (Երեւանի ավագանու) ընտրությունների նկատմամբ Ֆեյսբուքյան նույն կարգի պատրաստություններ եւ քարոզչական գործընթացների մեկնարկ, ինչպիսիք նախագահական ընտրությունների սկզբում էին: Եվ դա Ֆեյսբուքում նաեւ ՏԻՄ ընտրություններն առաջին անգամ կազմակերպելու փորձ է: Չնայած, մեր այս նախնական եզրակացությունը դեռ չի նշանակում, թե ֆեյսբուքյան հարթակները կօգտագործվեն ՏԻՄ հետագա ընտրությունների ժամանակ էլ: Խնդիրը հենց ներկայիս Ավագանու ընտրությունների առաձնահատկությունն է (պայքարը Երեւանի համար եւ պայքարի մեջ մտած ուժերն են):

Ֆեյսբուքում նախագահական ընտրական գործընթացների ընդհանուր եզրակացությունները՝ մեր տեղեկագրի վերջին թողարկման մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1.

Նախագահի թեկնածուների ֆեյսբուքյան լսարանները եւ նրանց էջերում ինտերակտիվ անդրադարձների հնարավորությունները

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Թեկնածուներ	Հավանողների քանակ				Բարեկամների քանակ				Էջի մասին
	19.02.13	10.03.13	11.03.13	09.04.13	19.02.13	10.03.13	11.03.13	09.04.13	
Ռաֆֆի Հովհաննիսյան	24123	27689	28347	32103					
Պարույր Հայրիկյան					4140	4070	4069	4000	
Հրանտ Բագրատյան	3436	3647	3678	3725					
Արամ Հարությունյան					1418	1562	1570	1767	
Արման Մելիքյան					702	797	794	878	
Անդրիաս Ղուկասյան	2109	2086	2078	2076					
Վարդան Սեդրակյան	5273	5178	5155	5106					

Էջը փակն է այլ օգտ. նյութերի համար

Էջը բաց է այլ օգտ. նյութերի համար

Աղյուսակ 2.

Քաղաքական գործիչների եւ ակտիվիստ օգտատերերի ֆեյսբուքյան լսարանները եւ նրանց էջերում ինտերակտիվ անդրադարձների հնարավորությունները

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Քաղգործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Բարեկամների քանակ				Բաժանորդների քանակ				Էջի մասին
	19.02.13	10.03.13	11.03.13	09.04.13	19.02.13	10.03.13	11.03.13	09.04.13	
Արմեն Աշոտյան	4953	4951	4951	4957	8392	8923	8997	10280	
Ստյոպա Սաֆարյան	4600	4919	4929	5365					
Կարապետ Ռուբինյան	2531	2629	2642	3006					
Նիկոլ Փաշինյան	3905	4730	4730	4999					
Հրանտ Տեր-Աբրահամյան	3123	3230	3237	3455	190	223	219	275	
Տարոն Պարսամյան					382	490	490	481	
Տիգրան Քոչարյան					794	844	868	892	
Նավակ Ճոճող									
Իզաբելլա Աբգարյան	2434	2637	2648	-					

Իզաբելլա Աբգարյանի էջում 23.03-ից հետո այլեւս չեն հրապարակվում

լսարանի մասին ցուցանիշները:

Էջը կիսակ է այլ օգտ. նյութերի համար

Էջը բաց է այլ օգտ. նյութերի համար

Աղյուսակ 3.

Թեկնածուների էջերի ինտերակտիվության ցուցանիշներ

Թեկնածուներ	Նյութերի քանակ			Նյութերի քանակ, որոնց շուրջ ծավալվել է քննարկում առանց թեկնածուի մասնակցության			Նյութերի քանակ, որոնց շուրջ ծավալվել է քննարկում թեկնածուի մասնակցությամբ			Քննարկված նյութերի ընդհանուր քանակ			%		
	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	*Հարակից*	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	*Հարակից*	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	*Հարակից*	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	*Հարակից*	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	*Հարակից*
Ռաֆֆի Հովհաննիսյան	217	440	**657**	193	421	**614**	0	0	**0**	193	421	**614**	89%	96%	**93%**
Պարույր Հայրիկյան	7	18	**25**	4	11	**15**	3	0	**3**	7	11	**18**	100%	61%	**72%**
Հրանտ Բագրատյան	33	13	**46**	8	6	**14**	1	1	**2**	9	7	**16**	27%	54%	**35%**
Արամ Հարությունյան	7	7	**14**	5	0	**5**	0	0	**0**	5	0	**5**	71%	0%	**36%**
Արման Մելիքյան	68	32	**100**	12	5	**17**	16	2	**18**	28	7	**35**	41%	22%	**35%**
Անդրիաս Ղուկասյան	25	9	**34**	12	4	**16**	0	0	**0**	12	4	**16**	48%	44%	**47%**
Վարդան Սեդրակյան	23	15	**38**	14	7	**21**	4	0	**4**	18	7	**25**	78%	47%	**66%**

Գրաֆիկ 1.

Թեկնածուների էջերի ինտերակտիվության ցուցանիշներ ըստ լսարանի կողմից արձագանքված նյութերի քանակի (%)

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)



Աղյուսակ 4.

Քաղաքական գործիչների եւ ֆեյսբուքյան ակտիվիստների էջերի ինտերակտիվության ցուցանիշներ

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Քաղգործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Նյութերի քանակ			Քննարկված նյութերի ընդհանուր քանակ			%		
	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	***Հնդամենը***	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	***Հնդամենը***	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	***Հնդամենը***
Արմեն Աշոտյան	67	38	**105**	58	26	**84**	87%	68%	**80%**
Ստյոպա Սաֆարյան	199	145	**344**	136	91	**227**	68%	63%	**66%**
Կարապետ Ռուբինյան	43	29	**72**	23	19	**42**	53%	66%	**58%**
Նիկոլ Փաշինյան	12	7	**19**	10	5	**15**	83%	71%	**79%**
Հրանտ Տեր-Աբրահամյան	74	77	**151**	65	62	**127**	88%	81%	**84%**
Տարոն Պարսամյան	28	10	**38**	19	9	**28**	68%	90%	**74%**
Տիգրան Քոչարյան	75	40	**115**	74	34	**108**	99%	85%	**94%**
Նավակ Ճոճող	90	76	**166**	88	69	**157**	98%	91%	**95%**
Իզաբելլա Արզարյան	102	71	**173**	95	61	**156**	93%	86%	**90%**

Գրաֆիկ 2.

Քաղաքական գործիչների եւ ֆեյսբուքյան ակտիվիստների էջերի ինտերակտիվության ցուցանիշներ ըստ լսարանի կողմից արձագանքված նյութերի քանակի (%)

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)



Աղյուսակ 5.

Քաղաքական գործիչների և ակտիվիստ օգտատերերի միջին օրական ակտիվությունն ըստ ստատուսների քանակի

Քաղգործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընտր. թեմայով նյութերի քանակ			Այդ թվում՝ սեփական ստատուս			Ստատուսների միջին օրական քանակ (20 օր)	Ստատուսների միջին օրական քանակ (30 օր)	Ստատուսների միջին օրական քանակ (50 օր)	%		
	19.02-10.03.13	11.03-09.04.13	Ընդամենը	19.02-10.03.13	11.03 - 09.04.13	Ընդամենը	19.02 - 10.03.13	11.03 - 09.04.13	Ընդամենը	19.02 - 10.03.13	11.03 - 09.04.13	Ընդամենը
Արմեն Աշոտյան	67	38	**105**	29	7	**36**	1.5	0.2	**0.7**	43 %	18 %	**34%**
Ստյոպա Սաֆարյան	199	145	**344**	64	38	**102**	3.2	1.3	**2**	32 %	26 %	**30%**
Կարապետ Ռուբինյան	43	29	**72**	7	6	**13**	0.4	0.2	**0.3**	18 %	21 %	**18%**
Նիկոլ Փաշինյան	12	7	**19**	0	1	**1**	0	0	**0.0**	0%	14 %	**5%**
Հրանտ Տեր-Աբրահամյան	74	77	**151**	43	39	**82**	2.2	1.3	**1.6**	58 %	51 %	**54%**
Տարոն Պարսամյան	28	10	**38**	16	10	**26**	0.8	0.3	**0.5**	57 %	100%	**68%**
Տիգրան Քոչարյան	75	40	**115**	68	32	**100**	3.4	1.1	**2**	91 %	80 %	**87%**
Նավակ Ճոճող	90	76	**166**	70	54	**124**	3.5	1.8	**2.5**	78 %	71 %	**75%**
Իզաբելլա Աբգարյան	102	71	**173**	76	43	**119**	3.8	1.4	**2.4**	75 %	61 %	**69%**

Գրաֆիկ 3.

Քաղաքական գործիչների և ակտիվիստ օգտատերերի միջին օրական ակտիվությունն ըստ ստատուսների քանակի



Աղյուսակ 6.

Թեկնածուների էջերում բարձրացված թեմաներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Թեկնածուներ	Ընտր. գործընթաց			Ներքաղ. ազատություններ			Արտքաղ. հարաբերություններ			Անվտանգ/ բանակ/ Ղարաբաղ			Տնտես. վիճակ			Սոցիալ. պաշտպանված/առողջապահություն			Բնապահպանություն			Կրթություն/ մշակույթ		
	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*	19.02 - 10.03.13	11.03- 09.04.13	*Ընդամենը*
Ռաֆֆի Հովհաննիսյան	283	578	**861**	126	124	**250**	16	22	**38**	12	12	**24**	3	4	**7**	6	5	**11**	2	1	**3**	1	2	**3**
Պարույր Հայրիկյան	13	30	**43**	0	10	**10**	0	1	**1**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Հրանտ Բագրատյան	35	10	**45**	10	1	**11**	0	1	**1**	1	3	**4**	8	9	**17**	2	1	**3**	0	3	**3**	2	0	**2**
Արամ Հարությունյան	19	15	**34**	4	4	**8**	0	0	**0**	0	1	**1**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Արման Մելիքյան	136	82	**218**	61	46	**107**	0	0	**0**	0	5	**5**	0	0	**0**	0	3	**3**	0	0	**0**	0	0	**0**
Անդրիաս Ղուկասյան	52	17	**69**	10	10	**20**	0	0	**0**	0	1	**1**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Վարդան Սեդրակյան	36	13	**49**	10	14	**24**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**

Գրաֆիկ 4.

Թեկնածուների էջերում բարձրացված թեմաներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)






Կրթութ/մշակույթ 2
Բնապահպան 3
Սոցիալական... 3
Տնտեսական վիճակ 17
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ 4
Արտքաղ. հարաբերություններ 1
Ներքաղ. Ազատություններ 11
Ընտր. գործընթաց 45
0 10 20 30 40 50
Հրանտ Բազրատյան


Կրթութ/մշակույթ 0
Բնապահպան 0
Սոցիալական... 0
Տնտեսական վիճակ 0
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ 1
Արտքաղ. հարաբերություններ 0
Ներքաղ. Ազատություններ 8
Ընտր. գործընթաց 34
0 5 10 15 20 25 30 35 40
Արամ Հարությունյան


Կրթութ/մշակույթ 0
Բնապահպան 0
Սոցիալական... 3
Տնտեսական վիճակ 0
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ 5
Արտքաղ. հարաբերություններ 0
Ներքաղ. Ազատություններ 107
Ընտր. գործընթաց 218
0 50 100 150 200 250
Արման Մելիքյան


Կրթութ/մշակույթ 0
Բնապահպան 0
Սոցիալական... 0
Տնտեսական վիճակ 0
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ 1
Արտքաղ. հարաբերություններ 0
Ներքաղ. Ազատություններ 20
Ընտր. գործընթաց 69
0 10 20 30 40 50 60 70 80
Անդրիաս Ղուկասյան


Կրթութ/մշակույթ 0
Բնապահպան 0
Սոցիալական... 0
Տնտեսական վիճակ 0
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ 0
Արտքաղ. հարաբերություններ 0
Ներքաղ. Ազատություններ 24
Ընտր. գործընթաց 49
0 10 20 30 40 50 60
Վարդան Սեդրակյան

Աղյուսակ 7.

Քաղաքական գործիչների եւ ակտիվիստ օգտատերերի էջերում բարձրացված թեմաներ եւ դրանց անդրադարձների քանակ

Քաղգործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընտր. գործընթաց			Ներքաղ. ազատություններ			Արտքաղ. հարաբերություններ			Անվտանգ /բանակ/ Ղարաբաղ			Տնտեսական վիճակ			Սոցիալական պաշտպան/առողջապահություն			Բնապահպան.			Կրթութ/մշակույթ		
	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*	19.02 -10.03.13	11.03-09.04.13	*Ընդամենը*
Արմեն Աշոտյան	72	58	**130**	3	0	**3**	0	2	**2**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	3	0	**3**
Ստյոպա Սաֆարյան	242	212	**454**	42	39	**81**	3	1	**4**	4	4	**8**	1	4	**5**	0	2	**2**	0	2	**2**	0	4	**4**
Կարապետ Ռուբինյան	64	47	**111**	8	7	**15**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	1	**1**
Նիկոլ Փաշինյան	24	23	**47**	5	2	**7**	0	3	**3**	2	1	**3**	1	2	**3**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Հրանտ Տեր-Աբրահամյան	63	107	**170**	86	74	**160**	0	3	**3**	1	3	**4**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	1	**1**
Տարոն Պարսամյան	31	14	**45**	0	1	**1**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Տիգրան Քոչարյան	80	61	**141**	2	0	**2**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**	0	0	**0**
Նավակ Ճոճող	75	120	**195**	56	24	**80**	0	8	**8**	4	3	**7**	0	6	**6**	0	1	**1**	0	1	**1**	0	1	**1**
Իզաբելլա Աբգարյան	125	93	**218**	52	26	**78**	1	1	**2**	3	2	**5**	0	3	**3**	0	1	**1**	0	5	**5**	2	4	**6**

Գրաֆիկ 5.

Քաղաքական գործիչների եւ ակտիվիստ օգտատերերի էջերում բարձրացված թեմաներ եւ դրանց անդրադարձների քանակ






Իզաբելլա Աբգարյան 2
Նավակ Ճոճող 8
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 3
Նիկոլ Փաշինյան 3
Կարապետ Ռուբինյան 0
Ստյոպա Սաֆարյան 4
Արմեն Աշոտյան 2
0 2 4 6 8 10
Արտքաղ. հարաբերություններ


Իզաբելլա Աբգարյան 5
Նավակ Ճոճող 7
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 4
Նիկոլ Փաշինյան 3
Կարապետ Ռուբինյան 0
Ստյոպա Սաֆարյան 8
Արմեն Աշոտյան 0
0 2 4 6 8 10
Անվտանգ/բանակ/Ղարաբաղ


Իզաբելլա Աբգարյան 3
Նավակ Ճոճող 6
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 0
Նիկոլ Փաշինյան 3
Կարապետ Ռուբինյան 0
Ստյոպա Սաֆարյան 5
Արմեն Աշոտյան 0
0 1 2 3 4 5 6 7
Տնտեսական վիճակ


Իզաբելլա Աբգարյան 1
Նավակ Ճոճող 1
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 0
Նիկոլ Փաշինյան 0
Կարապետ Ռուբինյան 0
Ստյոպա Սաֆարյան 2
Արմեն Աշոտյան 0
0 0.5 1 1.5 2 2.5
Սոցիալական պաշտպանված/առողջապահություն


Իզաբելլա Աբգարյան 5
Նավակ Ճոճող 1
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 0
Նիկոլ Փաշինյան 0
Կարապետ Ռուբինյան 0
Ստյոպա Սաֆարյան 2
Արմեն Աշոտյան 0
0 1 2 3 4 5 6
Բնապահպան


Իզաբելլա Աբգարյան 6
Նավակ Ճոճող 1
Տիգրան Քոչարյան 0
Տարոն Պարսամյան 0
Հրանտ Տեր-Աբրահամյան 1
Նիկոլ Փաշինյան 0
Կարապետ Ռուբինյան 1
Ստյոպա Սաֆարյան 4
Արմեն Աշոտյան 3
0 1 2 3 4 5 6 7
Կրթություն/մշակույթ

Աղյուսակ 8.

Ընտրական գործընթաց թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2013թ. փետրվարի 19 – ապրիլի 9)

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդա-մենը
1. Թեկնածուների առաջադրում	13	4	*17*
2. Ընտրությունների ընթացք	5	10	*15*
3. Քարոզարշավի ընթացք	6	0	*6*
4. Ընտրացուցակներ	19	1	*20*
5. Նախագահական եւ խորհրդարանական կառավարում	1	5	*6*
6. Այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների գնահատականներ (դիտորդական առաքելություններ)	19	12	*31*
7. Այս կամ այն թեկնածուին արտաքին ուժերի կողմից սատարում	6	16	*22*
8. Սոցիոլոգիական եւ այլ հարցումներ	1	7	*8*
9. Ընտրախախտումներ	27	42	*69*
10. Կեղծված ընտրություններ	136	142	*278*
11. ԿԸՀ	25	19	*44*
12. Ընտրակաշառք	13	7	*20*
13. Վարչական ռեսուրսի օգտագործում	32	15	*47*
14. Ընտրական արդյունքների վիճարկում	216	128	*344*
15. Ընտրությունների բոյկոտում	7	1	*8*
16. Քարոզչական պայքար	5	30	*35*
17. Նախընտրական ծրագիր	2	51	*53*
18. Բոնություններ և ճնշումներ ընտրական գործընթացում	66	193	*259*
19. Հետընտրական ընդհանուր իրավիճակի նկարագրություն	160	68	*228*
20. Ընտրությունների արդյունքներ	11	15	*26*
21. Հրաժարական	16	40	*56*
22. Դասադուլ	12	100	*112*
23. Հացադուլ	252	50	*302*

24. Ապրիլի 9- Երդման արարողություն	90	74	*164*
25. Ավագանու ընտրություններ	30	22	*52*
26. Քաղաքացիական անհնազանդություն	7	6	*13*
27. Ալտերնատիվ կառույցներ	17	15	*32*
28. Եկեղեցի	6	5	*11*
29. Հետընտրական միջազգային արձագանքներ	8	5	*13*
30. Երկխոսություն/ Կոմպրոմիս	22	22	*44*

Աղյուսակ 9.

Ներքաղաքական ազատություններ թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Պետություն	9	4	*13*
2. Սահմանադրություն	23	7	*30*
3. Օրինականություն	46	9	*55*
4. Ժողովրդավարական զարգացում	12	3	*15*
5. Իրավունքներ	41	28	*69*
6. Քաղաքացիական հասարակություն	16	20	*36*
7. Դատական համակարգի անկախություն	27	13	*40*
8. Կոռուպցիա	10	4	*14*
9. Խոսքի ազատություն	8	13	*21*
10. Մեդիա	15	23	*38*
11. Իշխանափոխություն ընտրությունների միջոցով	6	8	*14*
12. Իշխանափոխություն հեղափոխության միջոցով	32	89	*121*
13. Արդարություն	30	23	*53*
14. Անպատժելիություն	1	8	*9*
15. Կրիմինալ	12	8	*20*
16. Իշխանության եւ բիզնեսի սերտաճում	13	3	*16*
17. Իշխանություն	57	41	*98*
18. Ընդդիմություն	25	41	*66*
19. Հասարակություն	40	40	*80*

Աղյուսակ 10.

Արտքաղաքական հարաբերություններ թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Արտաքին քաղաքական կողմնորոշումներ	1	2	*3*
2. Հարաբերություններ տարբեր երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ	9	17	*26*
3. Սփյուռք	30	3	*33*

Աղյուսակ 11.

Անվտանգություն/Բանակ/Ղարաբաղ թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Անվտանգության տարբեր խնդիրներ	2	-	*2*
2. Անվտանգությունն ապահովող ուժ, գործիչ	-	2	*2*
3. Միգրացիա	7	4	*11*
4. Բանակ	-	4	*4*
5. Ղարաբաղյան հակամարտություն	4	4	*8*

Աղյուսակ 12.

Տնտեսական վիճակ թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Տնտեսական զարգացման կեղծ ցուցանիշներ	0	2	*2*
2. Հարկեր	4	0	*4*
3. Հարկային օրենսդրություն	0	2	*2*
4. Բյուջե	6	3	*9*
5. Տնտեսական ճյուղեր	12	7	*19*
6. Մենաշնորհներ	1	2	*3*
7. Մանր եւ միջին բիզնես	1	0	*1*

Աղյուսակ 13.

Սոցիալական պաշտպանվածություն/առողջապահություն թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Նվազագույն աշխատավարձ	1	0	*1*
2. Նպաստներ	1	0	*1*
3. Թոշակներ	3	1	*4*
4. Առողջապահական խնդիրներ	1	0	*1*
5. Աղքատություն	6	4	*10*
6. Գործազրկություն	5	0	*5*

Աղյուսակ 14.

Բնապահպանություն թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Հանքեր	4	0	**4**
2. Ընդերքի օգտագործում	1	1	**2**
3. Կենդանական աշխարհի պահպանություն	1	1	**2**
4. Սեւան	0	1	**1**
5. Ջրավազանների պահպանություն	0	1	**1**
6. Բնապահպանական վիճակ	1	0	**1**
7. Բնապահպանների գործունեություն	1	0	**1**

Աղյուսակ 15.

Կրթություն/Մշակույթ թեմայով նյութերում արծարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

Խնդիր	Անդրադարձների քանակ		
	Թեկնածուներ	Քաղաքական գործիչներ և ակտիվիստ օգտատերեր	Ընդամենը
1. Մշակույթի նախարարություն եւ նախարար	0	1	***1***
2. Մշակութային տարբեր արժեքների պահպանություն	0	3	***3***
3. Բուհեր	3	3	***6***
4. Կրթության մակարդակ	0	1	***1***
5. Գիտություն	2	1	***3***
6. Կրթության քաղաքականացում	0	7	***7***

Աղյուսակ 16.
Սեւ PR թեկնածուների էջերում

Թեկնածուների էջեր	Թեկնածուի կողմից Սեւ PR			Այլ օգտատիրոջ կողմից Սեւ PR			Ընդամենը		
	19.02.13-10.03.13	11.03.13-09.04.13	Ընդամենը	19.02.13-10.03.13	11.03.13-09.04.13	Ընդա-մենը	19.02.13-10.03.13	11.03.13-09.04.13	Ընդա-մենը
Ռաֆֆի Հովհաննիսյան	4	0	**4**	0	0	**0**	4	0	**4**
Պարույր Հայրիկյան	3	2	**5**	0	0	**0**	3	2	**5**
Հրանտ Բագրատյան	1	3	**4**	3	1	**4**	4	4	**8**
Արամ Հարությունյան	10	5	**15**	0	0	**0**	10	5	**15**
Արման Մելիքյան	32	6	**38**	0	0	**0**	32	6	**38**
Անդրիաս Ղուկասյան	5	3	**8**	0	0	**0**	5	3	**8**
Վարդան Սեդրակյան	15	2	**17**	0	0	**0**	15	2	**17**